Քրիստոնյա Հայաստան

2019, ՓԵՏՐՎԱՐ Ա, ԹԻՎ 3 (527)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑՆ ԱՎՍՏՐԱԼԻԱ

Հունվարի 30-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Հայկազուն եպս Նաջարյանի եւ



թեմական խորհրդի իրավերով, հովվապետական այցով մեկնեց Ավստրալիա:

Նորին Սրբությանն ուղեկցում էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը եւ գավազանակիր Անանիա աբղ. Ծատուրյանը:

Փետրվարի 1-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ նրա շքախմբին Ավստրալիայի Սիդնեյ քաղաքի օդանավակայանում դիմավորեցին թեմի եկեղեցականները, թեմական եւ ծխական, ինչպես նաեւ հայկական կազմակերպությունների շուրջ քսան ներկայացուցիչ՝ թեմակալ առաջնորդ Հայկազուն եպս Նաջարյանի գլխավորությամբ:

Փետրվարի 2-ին Սիդնեյի Ս. Հարություն առաջնորդանիստ եկեղեցում տեղի ունեցավ Հրաշափառի արարողություն: Եկեղեցու առջեւ Ամենայն Հայոց Հայրապետին խաչվառներով, դրոշակներով եւ բարիգալստյան պաստառներով դիմավորեցին հոգեւոր դասը, թեմական եւ ծխական խորհուրդների, երգչախմբերի անդամները, դպրոցականներ եւ սկաուտներ:

Աղ ու հացի օրհնության արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը, շարականների երգեցողության ներքո, հանդիսավորապես մուտք գործեց եկեղեցի, ուր Հայոց Հովվապետի օրհնաբեր այցին սպասում էր ավելի քան 400 հայորդի: Օրհնելով բարեպաշտ հայորդիներին՝ Նորին Սրբությունն ուղղվեց դեպի ս. Խորան, ուր կատարվեց Եկեղեցու երկրպագության կարգը:

Այնուհետեւ եկեղեցական դասի, թեմական, ծխական խորհուրդների եւ համայն ավստրալահայության անունից Ամենայն Հայոց Կաթողիկոսին ողջունեց եւ բարի գալուստ մաղթեց Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Հայկազուն եպս Նաջարյանը՝ հրավիրելով Նորին Սրբությանն իր հայրական օրհնությունը բաշխելու ներկա ժողովրդին:

Իր պատգամի բնաբանն ընտրելով «Ինչպես որ ընդունեցիք Քրիստոս Հիսուսին՝ Տիրոջը, այնպես էլ ընթացե՛ք Նրանով՝ արմատավորված եւ կառուցված Նրա վրա, հաստատ մնալով հավատի մեջ» առաքելական հորդորը՝ Ամենայն Հայոց Հայրապետը ողջունեց Ավստրալիայում բնակվող եկեղեցասեր ու ազգասեր հայորդիներին՝ գոհաբանությամբ առ Աստված նշելով, որ տարիներ անց Տերը վերստին շնորհ է պարգեւել այցելելու Ավստրալիա եւ քրիստոսահիմն ու լուսավորչահաստատ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնությունն ու լույսը, հայրենաբնակ եղբայրների ու քույրերի սերն ու քաջալերանքը բերելու նրանց:

*«Դարերի ընթացքում դժվարություններ ու փորձություններ է դիմագրավել մեր ժողովուրդը, ցեղասպանության հետեւանքով ցրվել աշխարհով մեկ, բայց ամենուր, առաքյալի պատվերի համաձայն, պահպանել է հավատարմությունն առ Աստված, համբերել նեղություններին եւ գովարժան գործերով բարձրացրել իր կյանքը: Ինչպես որ աշխարհասփյուռ հայ համայնքներում, Ավստրալիայում նույնպես հայ համայնքի պատմությունը եղել է փորձությունների հաղթահարում, նոր հաջողությունների կերտում, հայրենիքին, մեր Սուրբ Եկեղեցուն ու հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին հավատարմության գովելի վկայություն: Դուք այստեղ համախմբվել եք աշխարհի տարբեր հայ համայնքերից, եւ բերելով ու պահպանելով ձեր ավանդույթները, դրանց գեղեցիկ բազմազանությամբ հարստացրել ու բարեզարդել եք Սիդնեյի համայնքը: Անցյալ դարի կեսերից այստեղ ծուխի հաստատումը եւ Սուրբ Հարություն եկեղեցու հիմնումն ու նրա շուրջ համախմբումն առավել աշխուժացրեցին ազգային եւ հոգեւոր-եկեղեցական կյանքը Սիդնեյի հայ համայնքի: Ծխական կյանքի առաջընթացին մեծապես նպաստեցին հայալեզու դպրոցների բացումը, տիկնանց եւ երիտասարդաց միությունների, տարեցների խնամքի կազմակերպության հաստատումը, ազգային, բարեսիրական եւ մշակութային բոլոր այն կառույցները, որ հիմնադրվել եւ գործում են ձեր ջանքերով:*

*Այսօր դուք նույն նախանձախնդիր ոգով զորացնում եք ազգային-եկեղեցական ձեր կյանքը, շեն ու բարօր պահում ձեր եկեղեցին, ազգային, մշակութային հաստատությունները: Բարեպաշտ ձեր ընթացքը դուք զարդարում եք եկեղեցանվեր գործերով, մանուկ սերնդի հոգատար դաստիարակությամբ՝ ջանալով ձեր զավակների հոգում սերմանել հավատքն առ Աստված եւ սերը՝ առ ազգն ու հայրենին, որպեսզի նրանք էլ՝ արմատավորված Քրիստոսին, ընդունեն Աստծո շնորհները եւ շարունակեն մեր ժողովրդի՝ Քրիստոսին հավատարիմ ազգային իրենց կյանքը: Ձեր ջանքերի բարի արդյունքները բերկրությամբ են լցնում համայնքի յուրաքանչյուր անդամի հոգին, ինչպես նաեւ Հայրապետիս սիրտը»*,– ասաց Նորին Սրբություն Գարեգին Բ Կաթողիկոսը:

Վեհափառն ընդգծեց, որ թեմական ու ծխական կյանքի աշխուժությունը, հոգեւոր-եկեղեցական անդաստանի բարեզարդությունը Աստծուց օրհնյալ պտուղներն են ավստրալաբնակ հայորդիների աստվածասիրության, ազգասիրության ու հայրենանվիրումի: Նորին Սրբությունը գնահատանքով անդրադարձավ հայրենիքի հանդեպ հայ համայնքի կողմից մշտապես դրսեւորվող սիրուն եւ զորակցությանը՝ հաստատելով, որ զորեղ սփյուռքը նաեւ ուժ եւ զորություն է հայրենիքի համար, իսկ հայրենիքը՝ երաշխավորը սփյուռքի գոյատեւման եւ պայծառության:



Հայոց Հովվապետը քաջալերեց հայորդիներին հանապազ ընթանալ Քրիստոսով, մեր հայրերի ավանդներով, հայրենյաց ջերմ սիրով: *«Սիրելինե՛ր, ձեր հոգեւոր միասնականության մեջ է, որ արթուն կմնա ձեր եւ ձեր զավակների աստվածասեր, ազգանվեր ու եկեղեցասեր ոգին, քանզի այդ միասնականությամբ են ձեր հայրերը դիմակայել բոլոր փորձություններին, հաղթահարել բոլոր դժվարությունները, այդ միաբանությամբ եւ դուք պիտի զորացյալ պահեք ազգային կյանքը Սիդնեյ քաղաքում եւ արդյունավորեք ձեր սերն առ հայրենին եւ սերը դեպի մեր Սուրբ Եկեղեցին եւ նրա աստվածակառույց հոգեւոր կենտրոն Սուրբ Էջմիածինը»*,– հավելեց Հայոց Հայրապետը՝ նշելով, որ հայրենիքից հեռու բազում մարտահրավերներ կան նրանց կյանքում, դժվարություններ՝ հատկապես նոր սերնդին ազգային ոգով ու նկարագրով կրթելու, եկեղեցական կյանքում ներգրավված պահելու գործում: Նորին Սրբությունը հաստատեց, որ տարակույս չունի, որ, առկա բոլոր խնդիրներով հանդերձ, հայորդիները պիտի շարունակեն մեր ժողովրդին հատուկ քաջությամբ ու տոկունությամբ պահպանել հոգեւոր ու ազգային արժեքները, հաստատուն ու անխաթար պահել իրենց բարեպաշտ կյանքը:

Իր գնահատանքը բերելով ամենքին՝ ազգային-համայնքային ու եկեղեցական կյանքում իրենց նվիրյալ ծառայության ու հոգատար ջանքերի համար, Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայցեց, որ Տերը բարօրության մեջ պահի Ավստրալիան եւ նրա բարեպաշտ ժողովրդին, Իր շնորհներով օրհնի համայն մեր ժողովրդին՝ իր խաղաղ ու պայծառ գալիքը կերտելու եւ հավատքով ամուր միշտ փառավորելու Երկնավորին:

Պատգամի ավարտին՝ Հայրապետական մաղթերգի երգեցողությունից հետո, հավատավոր հայորդիները հնարավորություն ունեցան մոտենալու Նորին Սրբությանը եւ համբուրելու նրա աջը, ստանալու նվեր խաչիկներ:

Այնուհետեւ Սուրբ Հարություն եկեղեցու սրահում տեղի ունեցավ հանդիպում ժողովրդի հետ:

➥ *էջ 2*

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

← *էջ 1*

## Հրաշափառի արարողություն Սիդնեյի Սուրբ Երրորդություն հայկական եկեղեցում

Փետրվարի 2-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Հայկազուն եպս Նաջարյանի ուղեկցությամբ այցելեց Սիդնեյ քաղաքի Ս. Երրորդություն հայկական եկեղեցի, որտեղ տեղի ունեցավ Հրաշափառի արարողություն:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին եկեղեցու առջեւ դիմավորեցին եւ թափորով եկեղեցի առաջնորդեցին թեմի հոգեւոր դասը, թեմական եւ ծխական խորհրդների անդամները, որտեղ Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը բաշխեց այս առիթով համախմբված համայնքի հարյուրավոր անդամներին:

Համատեղ աղոթքից եւ հայրապետական Պահպանիչից հետո Հայկազուն սրբազանը ողջունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետական այցն Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմ, մասնավորապես՝ չորս տարի առաջ կառուցված Ս. Երրորդություն եկեղեցի, որը դարձավ հոգեւոր տուն հայ համայնքի համար: Բարիգալստյան խոսքի ավարտին սրբազանը հրավիրեց Նորին Սրբությանն իր օրհնությունը բերել հավաքված հայորդիներին, իր աղոթքով եւ պատգամով ներշնչել ժողովրդին եւ ամրացնել նրա կապը եկեղեցու հետ:



Ամենայն Հայոց Կաթողիկոսը փառք եւ գոհություն վերառաքեց առ Աստված, որ շնորհեց պարգեւը՝ վերստին այցելելու ավստրալաբնակ հայորդիներին, նաեւ առաջին անգամը լինելով՝ այցելելու Սիդնեյի Սուրբ Երրորդություն եկեղեցի, հայորդիների հետ ուրախանալու եւ վերապրելու միասնական աղոթքի ու համախմբման ջերմությունը:

*«Մայր Աթոռ Ս. Էջմիածնից բերել ենք ձեզ սեր եւ օրհնություն, ձեր կարոտյալ սրտերին բերել ենք ողջույն հայրենի մեր երկրից, օրհնություն ենք բերել ձեզ մեր նվիրական սրբավայրերից: Հայրապետիս հոգին լեցուն է բերկրանքով եւ նվիրական զգացումներով, քանզի տեսնում ենք ձեզ այսպես միասնական ու համախումբ: Համատեղ ջանքերով դուք ձեռք բերեցիք եւ բարեզարդեցիք Սուրբ Երրորդություն այս եկեղեցին, որպեսզի աղոթքի մշտամնա տուն ունենաք, Աստծո շնորհները վայելեք նրա խնկաբույր կամարների ներքո եւ պահպանեք ձեր ազգայինհոգեւոր կյանքն ու մշակութային արժեքները:*

*Մեր Սուրբ Եկեղեցուն անդամակցությամբ է, որ մեր ժողովրդի զավակները Տիրոջ ժողովուրդ են դարձել եւ փորձությունների միջով անցնելով՝ հաղթանակներ կերտել ու հարատեւել որպես ազգ՝ իր հավատքով, պատմությամբ, մշակույթով, արվեստով եւ ինքնագիտակցությամբ: Ձեր ձեռքբերումներն ու հաջողությունները հնարավոր են դարձել, քանզի այստեղ բնակություն հաստատած ձեր հայրերն իրենց զավակներին կրթել ու աճեցրել են ազգային ու հոգեւոր մեր ժառանգությամբ՝ մշտապես կարեւորելով ինքնության պահպանությունը, զորացնելով համայնքային կյանքը: Նրանք ձեր՝ իրենց զավակների հայացքներն ու սրտերն ուղղել են դեպի հայրենին ու մեր Սուրբ Եկեղեցին, որը մեր ժողովրդի հոգու ապաստանն է, ակունքը հավատքի ու Տիրոջ շնորհների: Այս վստահությամբ ու նվիրումով նորովի պիտի արդյունավորվի ձեր համայնքի կյանքը, քաջություն եւ ուժ պիտի ունենաք, որպեսզի աստվածային զորակցությամբ Սուրբ Երրորդություն եկեղեցու խորանից ճառագող կենարար լույսը մշտավառ պահեք, որով պիտի լուսավորվի ձեր եւ ձեր զավակների կյանքի ուղին, եւ դուք պիտի շարունակեք գոհաբանել Տիրոջը՝ սաղմոսերգուի հետ ասելով. «Քո երեսի լույսը ծագեց մեզ վրայ, եւ ուրախութիւն տուիր մեր սրտերին»*,– ասաց Ամենայն Հայոց Հայրապետը:

Նորին Սրբությունն իր խոսքում անդրադարձ կատարեց նաեւ հայ համայնքի առջեւ ծառացած մարտահրավերներին՝ հայապահպանության, ազգային ավանդներին, հայրենյաց ժառանգությանը հավատարիմ մնալու խնդիրներին: *«Մենք հավատում ենք, որ Տեր Աստված զորավիգ է ձեզ ազգապահպան ու եկեղեցանվեր ձեր բարի ճանապարհին ու պիտի շարունակի ծագեցնել Իր լույսը, ողորմությունն ու շնորհները ձեզ վրա եւ նոր իրագործումների ուրախությունը պիտի պարգեւի ձեր սրտերին: Մեր փափագն ու հորդորն է, սիրելի՛ զավակներ Մեր, որ ձեր հոգու հայացքը միշտ սեւեռված լինի Մայր հայրենիքին եւ մեր հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, որը Քրիստոսի աhեղախորհուրդ իջման լույսը սփռում ու բաշխում է աշխարհասփյուռ մեր եկեղեցիներին եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարազատ զավակներին:*

*Մենք բարձր ենք գնահատում ձեր ջանքերը, որ ներդնում եք համայնքային կյանքի զարգացման ու բարգավաճման համար եւ Մեր հայրական օրհնությունն ենք բերում աստվածահաճո ձեր ձեռնարկներին: Այստեղ կայք հաստատած ձեր պապերի ու հայրերի օրինակով շարունակեք արարել, ստեղծագործել աստվածապարգեւ ջերմեռանդ սիրով, սեր՝ եկեղեցու եւ ազգի հանդեպ, նվիրում՝ ընտանիքի ու բարեկամի հանդեպ, հավատարմություն ու նախանձախնդրություն՝ Ավստրալիայի ու մեր Մայր հայրենիքի հանդեպ, բոցավառ ու անմար սեր՝ մեր անգին ժառանգության ու ավանդների հանդեպ: Հավատացե՛ք, սիրելինե՛ր, որ երկնահեղ շնորհներով, զորավոր աջակցությամբ Սուրբ Երրորդության, որի անունը կրում է ձեր նվիրական եկեղեցին, դուք եւ ձեր զավակները եւ ձեր զավակների զավակները, ամեն նեղություն ու խնդիր հաղթահարելով, հասնելու եք առավել մեծ հաջողությունների եւ բարիքների»*,– նշեց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունն աղթեց, որ Տերը խաղաղության ու բարօրության մեջ պահի Ավստրալիան, մեր ժողովրդի բարեպաշտ զավակներին պարգեւի կյանքի երջանիկ ու երկար օրեր եւ արդյունավորի նրանց եկեղեցաշեն եւ ազգանվեր ծրագրերը, արդար ու բարի բոլոր գործերը:

Այցի առիթով Հայոց Հայրապետը Սուրբ Երրորդություն եկեղեցուն ընծայեց Տիրոջ խաչելության պատկեր, նաեւ Սուրբ Էջմիածնից բերված խաչեր ընծայեց ներկա հավատացելոց:

Աջահամբույրից հետո եկեղեցու «Պաթմանյան» սրահում համայնքի անդամների հետ տեղի ունեցան հանդիպում եւ հյուրասիրություն, որոնց ընթացքում ներկաները հնարավորություն ունեցան ջերմ մթնոլորտում զրուցելու Վեհափառ Հայրապետի հետ, ստանալու իրենց հուզող տարբեր հարցերի շուրջ Նորին Սրբության թելադրություններն ու հորդորները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ առանձին հանդիպում ունեցավ եկեղեցական վարչության անդամների հետ, ծանոթացավ համայնքային ծրագրերին՝ իր օրհնությունն եւ գնահատանքը բերելով եկեղեցական կառույցներում ընդգրկված աշխարհական անձանց նվիրյալ եւ անսակարկ ծառայության համար:



## Հայրապետական Պատարագ Սիդնեյի Ս. Հարություն առաջնորդանիստ եկեղեցում

Փետրվարի 3-ին, ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, սուրբ Պատարագ մատուցվեց Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի Սիդնեյ քաղաքի Ս. Հարություն առաջնորդանիստ եկեղեցում:

Պատարագի արարողությանը ներկա էին Նյու Սաութ Վելսի նահանգապետուհի Գլադիս Բերեջիկլյանը, Խորհրդարանի անդամ եւ նախարար Փոլ Ֆլեչըրը, Քրիստոնյա-դեմոկրատ կուսակցության հիմնադիր եւ նախագահ Ֆրեդ Նայլը, հայր Թովմաս Վարկիզը, Նյու Սաութ Վեյլզ էկումենիկ խորհրդի նախագահ Ռեյ Վիլիըմսը, Ավստրալիայի էկումենիկ խորհրդի ընդհանուր քարտուղար Էլիզաբեթ Սթոնը, Ղպտի եկեղեցու առաջնորդ Դանիել եպիսկոպոսը, Էմմանուել սինագոգի խորհրդի նախագահ Կուեն Հարիսը, թեմական ու ծխական խորհրդների անդամներ, հայկական կազմակերպությունների ներկայացուցիչներ եւ բարերարներ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը թափորով՝ ամպհովանիի ներքո, առաջնորդվեց դեպի տաճար, ուր մասնակցությամբ բարեպաշտ հայորդիների եւ բազում հյուրերի՝ մատուցեց Պատարագ:

Սուրբ Պատարագին, որպես առընթերականեր, սպասավորում էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի պատասխանատու Նաթան արք. Հովհաննիսյանը եւ Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Հայկազուն եպս Նաջարյանը:

Արարողության ընթացքում Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու պատգամը բերեց հավաքված ժողովրդին: *«Հովվապետական Մեր այցերի ընթացքում հավատավոր մեր ժողովրդի եւ զավակների հետ մեր հանդիպումներն են առավել ամրացնում մեր այն համոզումը, որ Քրիստոսի Սուրբ Եկեղեցուն ամուր կապված հայ ժողովուրդը, աշխարհի ամենահեռավոր անկյուններում անգամ, պահելու է իր ազգային, քրիստոնեական ինքնությունը: Փառք ենք մատուցում Տիրոջը, որ արժանացնում է Մեզ շնորհին ձեզ հետ միասին գոհության աղոթք բարձրացնելու երկինք՝ սուրբ Պողոս առաքյալի խոսքերը կրկնելով. «Ողջույն տվեք միմյանց սուրբ համբույրով» (Ա Կորնթ. ԺԶ 20): Պողոս առաքյալն ինքը՝ իբրեւ ընտրյալ անոթ եւ Տիրոջ խոսքի անվեհեր քարոզիչ, շրջում էր քրիստոնեական նորաստեղծ համայնքներում՝ սուրբ ողջույնի միջոցով իրար կապելով միմյանցից հազարավոր կիլոմետրեր հեռու գտնվող քրիստոնյա եղբայրներին ու քույրերին: Այսօր Մենք էլ, իբրեւ ս. Գրիգոր Լուսավորչի Աթոռի գահակալ, եկել ենք ձեզ բերելու սուրբ ողջույնները համայն հայության նվիրական կենտրոն Սուրբ Էջմիածնից եւ հայրապետական մեր պատգամը փոխանցելու այստեղ հավաքված մեր սիրելի զավակներին»*,– ասաց Հայոց Հայրապետը:

Նորին Սրբությունն ընդգծեց, որ պատմության բերած դժվարին հանգամանքների ու տառապանքների պատճառով աշխարհասփյուռ դարձած հայ ժողովուրդը խաչելության իր երկար ճանապարհներն ավարտել է հարության արեւածագերով՝ իբրեւ լույսի ու զորության աղբյուր մշտապես ճանաչելով մեր Տիրոջը՝ Քրիստոսին, Որի հարության զորությամբ կրկին ուժ է առել ինքնակազմակերպվելու եւ պահպանելու ազգային քրիստոնեական իր դիմագիծը: Ըստ Վեհափառի՝ որտեղ էլ ապրել է քրիստոնյա հայորդին, աշխարհի ամենահեռավոր ու մոռացված ծագերում անգամ, նրա հոգին ծաղկել է Արարատի զավակը լինելու հայրենասիրական ոգով եւ հաղթանակած Փրկչի հարության զորությամբ, նա ուխտել է՝ մնալ մյուռոնադրոշմ, հավատարիմ զավակը Սուրբ Էջմիածնի, որով անշեղորեն կրել է կնիքը հարության եւ շնորհը Քրիստոսի որդեգրության:

Իր խոսքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ հաստատեց. *«Մենք անչափ ուրախ ենք եւ մխիթարված, որ Ավստրալիայի հայ*



*համայնքը նոր զարթոնք է ապրում, զորացնում հավատի իր կյանքը՝ համախմբված Հայ Եկեղեցու շուրջ, վերարժեւորելով մեր պատմության փառավոր հիշատակները եւ նախնյաց ժառանգությունը:*

→ *էջ 3*

# ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑՆ ԱՎՍՏՐԱԼԻԱ



➥ էջ 2

*Դուք եք այսօր հայ ժողովրդի դեսպանները հեռավոր Ավստրալիայում, ձեզանով նաեւ այստեղ գիտեն հայոց քրիստոնյա հավատավոր հոգին, Հայ Եկեղեցին, մեր ժողովրդի հնամյա ու հարուստ ժառանգությունն ու մշակույթը, խաղաղության, ազատության, արարելու սերը:*

*Սիրելինե՛ր, պատասխանատու ենք մեր ժամանակի համար, եւ մեր գործերով է, որ այն պիտի արձանագրվի իբրեւ վերականգնումի ժամանակաշրջան՝ լցված Քրիստոսով ազատ հոգու եւ մտածողության, քրիստոնեական մեր նկարագրի ամրագրման ու վերարժեւորման ոգով: Մեր նոր ձեռքբերումներով ու հաղթանակներով է, որ պիտի առաջ ընթանա ժամանակը հայրենիքի եւ սփյուռքի վերաշինության, ժամանակը՝ մեր գաղթօջախներում ազգային կյանքի վերազարթոնքի, մշակույթի, գիտության ու կրթության զարգացման եւ ծաղկունքի: Քրիստոս է մեր ճանապարհը, որին ճանաչել են մեր հայրերը, եւ որին ճանաչում ենք մենք՝ անվարան հավատալով ու հաղորդակից դառնալով Նրա հարության կենսագործող ու վերանորոգող զորությանը»:*

Հայոց Հայրապետն իր հորդորն ուղղեց ավստրալահայությանը՝ շարունակելու ապրել նույն ջերմեռանդ հավատով եւ ազգային նախանձախնդրությամբ՝ հավատի ու աստվածահաճո գործերի համադրմամբ շենացնելով Հայ Եկեղեցու շուրջ համախմբված իրենց համայնքը: Նորին Սրբությունը հորդորեց հիշել ու իրենց հայրենասեր հոգիներում պահել տերունահիմն Սուրբ Էջմիածինը, որի Իջման ս. Սեղանի առջեւ երկրպագել եւ Աստծուն են փառաբանել մեր պատմության բերրի անդաստանի անխոնջ մշակներն ու սպասավորները:

*«Մայր տաճարիս վեհափառ գմբեթները, որոնք դիմակայել են պատմության աշխարհավեր փորձություններին ու զանազան վայրագ քանդումներին, ժամանակների արժեքաբանական մարտահրավերներին, այսօր հպարտորեն կանգուն են՝ իբրեւ մարմնացումը հայ քրիստոնեական ոգու եւ ինքնության:*



*Հանապազ մտաբերե՛ք Հայաստանի սրբազան լեռները, զուլալ գետերը, մեր կապուտակ ու ջինջ Սեւանը, Արարատի վեհապանծ բարձունքները, մեր ազգային պայքարի ու հերոսացումի վկա Սարդարապատը եւ Արցախը, Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակը հավերժացնող Ծիծեռնակաբերդը: Ձեր ազգային կյանքի մեջ միշտ վառ պահեք հին մարմնի մեջ նոր ոգով վեր հառնող, հայ քրիստոնեական քաղաքակրթությունը մարմնավորող մեր փառապանծ վանքերն ու եկեղեցիները, որտեղ ամեն մի քար, հողի ամեն մի պատառիկ սրբագործված են մեր փառավոր նախնյաց մշտամրմունջ աղոթքով ու հայրենանվեր սիրով, նահատակության արյամբ ու պայքարի քրտինքով:*

*Հաղորդակի՛ց դարձեք, ձեր գործերով ու ձեր նվիրական զգացումներով, նորակերտ Հայաստանին, հայրենիքում իրենց հանապազ տքնությամբ արարող, հայրենյաց սահմաններն անսասան պահող ձեր եղբայրներին ու քույրերին, որոնք վերստին մեր ազգային, քրիստոնեական արժեքներին իրենց նվիրվածությունն ու հավատարմությունը ամբողջ աշխարհին ի ցույց դրեցին՝ հաստատելով, որ ամենաճգնաժամային պահերին իսկ հայ ժողովուրդը գիտի Քրիստոսի սուրբ պատվիրանների համաձայն առաջնորդվել եւ իր հայրենիքն անշեղորեն տանել դեպի նոր ու լուսավոր ապագա: Հայրենիքն է իր անքակտելի կապերով միացնում աշխարհասփյուռ հայերիս, «որի մեջ եւ կանք եւ պարծենում ենք Աստծո փառքի լույսով» (Հռոմ. 5. 2):*

*Նոր արշալույս է բացվում ի Հայաստան, Արցախ եւ ի Սփյուռս՝ նոր հույսերով, ապահով, բարօր ու երջանիկ կյանք կերտելու վճռական տրամադրությամբ եւ կամքով: Հայրենիքից ձեզ եկող լուրերն այսօր զգեստավորված են ոգեշնչումի ու քաջալերության թեւերով, եւ մենք՝ ամենքս, պետք է մեր կարելին անենք՝ միավորելու մեր ուժերը եւ զորացնելու մեր ազգային-քրիստոնեական հասարակությունը, կերտելու առաջընթացի ու հանդուրժողականության, սիրո եւ եղբայրության տիպար եւ այդ ոգով ու նկարագրով կերտելու ամեն հայի հուսալի ու շեն բնօրրան հայրենիքը: Արդարեւ, հազարամյակների մեր պատմության օրինակն ու հարուստ ժառանգությունը, երկիր շենացնելու եւ մշակույթ զարգացնելու փորձը, ազատության հանդեպ հոգու եւ մտքի աննահանջ ձգտումը – այս ամենն ունենք ավելիով, որովհետեւ կանգնած ենք մեր նախնյաց հզոր ու անպարտելի ուսերի վրա, եւ դրանով մեր աչքերի առաջ բացվում են լուսավոր հորիզոնները մեր հայրենիքի:*

*Թող Աստված զորացնի մեր ողջ ժողովրդին՝ միասնականությամբ հասնելու իրագործմանը մեր արդար իղձերի, մեր պետության առավել հզորության եւ համայն հայության բարօրության ու պայծառության»,*– նշեց Հայոց Հովվապետը:

Նորին Սրբությունը նաեւ ողջունեց Ներկայությունն Ավստրալիայի պետական այրերի, դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչների, քույր եկեղեցիների ներկայացուցիչների՝ այն նկատելով վկայություն հայ համայնքի, մեր Սուրբ Եկեղեցու հանդեպ բարեկամության ու եղբայրական ջերմ զգացումների:

Իր աղոթքը բարձրացնելով Ավստրալիայի եւ նրա ժողովրդի շեն ու բարօր կյանքի համար՝ Վեհափառ Հայրապետը Տիրոջ օրհնությունն ու զորակցությունը հայցեց Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդին, հոգեւոր դասին, թեմական եւ ծխական խորհուրդների պատվարժան անդամներին եւ իր ավստրալահայ զավակներին՝ իրենց հավատը, հայրենապաշտ ու եկեղեցանվեր ոգին ամուր պահելու մաղթանքով:

Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որպես գնահատանք նվիրյալ ծառայության եւ արտահայտություն հայրական սիրո, Հայկազուն եպս Նաջարյանին շնորհեց եպիսկոպոսական պանակե: Եկեղեցու հոգեւոր հովիվ Ավետիս քհն. Համբարձումյանին շնորհվեց քահանայական լանջախաչ:

Պատարագի ընթացքում, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ, Հայկազուն սրբազանի կողմից ընթերցվեց հայրապետական սրբատառ կոնդակը, որով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Սահակ – Սուրբ Մեսրոպ» պատվո բարձր շքանշան շնորհվեց տիկին Գլադիս Բերեջիկլյանին՝ ազգօգուտ եւ եկեղեցանվեր իր ծառայության համար:

Հայրապետական այցելության առիթով եկեղեցուն ընծայվեց Տիրոջ սուրբծննդյան պատկեր՝ մաղթանքով, որ նրա առջեւ վերառաքվող աղոթքներով համայնքը շարունակի հավատի մեջ զորանալ, լավատեսության հույսով ու աննվազ կամքով կառուցել իր երազների երկիրը:



## Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ կատարվեց նորակառույց առաջնորդարանի բացումը

Նույն օրը, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի նորակառույց առաջնորդարանի բացման արարողությունը:

Սիդնեյի Ս. Հարություն առաջնորդանիստ եկեղեցում մատուցված Պատարագի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուղղվեց դեպի առաջնորդարանի նորակառույց շենքը, որտեղ իրեն սպասում էին պետական այրեր, հայկական կազմակերպությունների ներկայացուցիչներ, Հայ Եկեղեցու բարերարներ եւ բազում այլ հավատավոր հայորդիներ:

Վեհափառ Հայրապետը Հայկազուն սրբազանի եւ թեմական խորհրդի ատենապետ տիար Սարգիս Տեր-Պետրոսյանի հետ միասին կատարեց առաջնորդարանի հուշաքարի բացումը եւ հատեց մուտքի ժապավենը՝ ազդարարելով առաջնորդարանի պաշտոնական բացումը:

Տոնական այս առիթով Նորին Սրբությունն իր օրհնության եւ գնահատանքի խոսքն ուղղեց ներկաներին՝ գոհություն հայտնելով Աստծուն, որ պարգեւել է շնորհը ուրախակից լինելու հայ համայնքին՝ նորակառույց առաջնորդարանի բացման հանդիսության կապակցությամբ, որը ծառայելու է ավստրալաբնակ մեր ժողովրդի հոգեւոր եւ ազգային կյանքի պայծառությանը:

*«Նորաշեն, մեծ ու գեղեցիկ այս շենքի կառուցումը մի նոր վկայություն է ավստրալաբնակ մեր ժողովրդի հավատքի եւ եկեղեցասիրության եւ ազգային կյանքի հանդեպ նախանձախնդրության: Այդ ոգին է շենացրել այստեղ հայկական կյանքը: Այդ ոգին միավորել է ձեր ծնողներին ու պապերին եկեղեցիներ կառուցելու, դպրոց ունենալու, ազգային կառույցներ ստեղծելու՝ պահպանելու համար ազգային ինքնությունը եւ հավատքի կյանքը, որն ունի Քրիստոսի շնորհը հավիտենականության:*

*Տիրոջ օրհնությամբ նոր առաջնորդարանը ծառայելու է Ավստրալիայում մեր Եկեղեցու առաքելության արդյունավորմանը, հայ համայնքի զորացմանը, որպես ազգի տուն՝ համախմբելով այս մեծ երկրում ապրող մեր ժողովրդի զավակներին: Բոլորիս տեսիլքն է, որ այս նորաշուք հարկի ներքո հատկապես երիտասարդ հայորդիներն առնչվեն իրենց արմատներին եւ առավել ներգրավվեն հոգեւոր եւ ազգային կյանքում: Առաջնորդարանը, ինչպես ազգային կյանքի ամեն ձեռքբերում, նաեւ բարի գործերի նախանձախնդրության օրինակն է փոխանցելու հաջորդ սերունդներին՝ շարունակելու ավստրալահայ համայնքի հավատքի կյանքը, բարեպաշտ ընթացքն ու ավանդները: Ձեր բարեպաշտությունը, սիրելինե՛ր, նաեւ հիմքն է այս մեծ ու բազմազգ երկրում ձեր հաջողություններ եւ ձեր հանդեպ հարգանքի ու վստահության»,*– նշեց Ամենայն Հայոց Հայրապետը:

Այս կապակցությամբ Նորին Սրբությունը, օրհնությամբ հանդերձ, իր երախտիքի խոսքը փոխանցեց հանդիսությանը մասնակից իշխանության ներկայացուցիչներին, քույր եկեղեցիների առաջնորդներին եւ հավատակից եղբայրներին՝ այն բարի վերաբերմունքի համար, որը հայ ժողովրդի զավակները վայելում են Ավստրալիայում:

Հավատքի անսասանության, միմյանց հանդեպ սիրո եւ միասնականության պատգամի հետ մեկտեղ Վեհափառ Հայրապետը հորդորեց հայորդիներին շարունակել շենացնել իրենց կյանքը, իրագործել ազգաշահ գործեր: Նորին Սրբությունը մաղթեց, որ առաջնորդարանն արդյունավորությամբ ծառայի ժողովրդի հոգեւոր եւ ազգային զարթոնքին՝ իրենց կյանքում վայելելու Աստծո օրհնությունն ու շնորհները: Հայրապետը հայցեց, որ Տերը պահպանի համայն մեր ժողովրդին ապահով ու անվտանգ, մեկ ու միասնական՝ մեր Սուրբ Եկեղեցիով, Սուրբ Էջմիածնով եւ նվիրական մեր հայրենիքով:

Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքն ու օրհնությունը բերեց առաջնորդարանի հիմնական բարերարներ տեր եւ տիկին՝ Լորիս եւ Սոնյա Խանջյաններին եւ իրենց ավանդը առաջնորդարանի կառուցմանը բերած եկեղեցու նվիրյալ զավակներին՝ հայցելով Տիրոջից նրանց քաջառողջություն, արեւշատ կյանք եւ ազգաշահ նոր ձեռնարկներ: Ի գնահատություն եկեղեցանվեր եւ ազգօգուտ ծառայության՝ հայրապետական կոնդակով տեր եւ տիկին Խանջյաններին շնորհվեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձրագույն շքանշանը:

Հիշարժան այս օրն Ամենայն Հայոց Կաթողիկոսը արքության պատիվ շնորհեց թեմակալ առաջնորդ Հայկազուն եպս Նաջարյանին՝ ի գնահատություն նրա բարեջան ծառայության:

➥ էջ 4

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

➥ *էջ 3*

Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը բերեց հոգեւոր դասին, որոնք անխոնջ խնամում եւ հսկում են մեր ժողովրդի հոգեւոր կյանքը, ինչպես նաեւ եկեղեցական վարչականներին եւ Ավստրալիայում ապրող համայն հավատավոր մեր ժողովրդին:

## Պաշտոնական ճաշկերույթ` ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի

Փետրվարի 3-ի երեկոյան Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի թեմական խորհրդի կողմից տրվեց պաշտոնական ճաշկերույթ` ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի:

Ճաշկերույթին ներկա էին հայ համայնքի երեք հարյուրից ավելի անդամներ, բարերարներ, հայկական կազմակերպությունների ներկայացուցիչներ, թեմի հոգեւոր սպասավորներ, քույր եկեղեցիների ներկայացուցիչներ: Հանդիսավարն էր թեմական խորհրդի փոխատենապետ դոկտ. Ստեփան Գրքաշարյանը:

Երեկոյին գեղարվեստական կատարումներով հանդես եկան համայնքի պարախմբերը, նվագախմբերը, երգչախմբերն ու տաղանդավոր աամուևաքողները` մեծ ոգեւորություն ու ցնծություն պարգեւելով ներկաներին:

Հանդիսության ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն օրհնության գրեր շնորհեց նորակառույց առաջնորդարանի մի շարք բարերարների, այդ թվում նաեւ տիար Արմեն Բաղդասարյանին` եկեղեցուն եւ առաջնորդարանին մատուցած իր երկարամյա ծառայության համար:

Երեկույթն ամփոփվեց Նորին Սրբություն Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի օրհնության պատգամով:

*«Գոհություն ենք մատուցում Աստծուն, որ քաջալերությամբ լեցուն, պայծառ պահեր ապրեցինք ձեզ հետ միասին: Մեր աղոթքերը միավորեցինք աշխարհի խաղաղության, Քրիստոսի Սուրբ Եկեղեցու անսասանության եւ մարդկության կյանքում Տիրոջ շնորհների առատության համար: Զգացինք մեր ժողովրդի սերը Առաքելական մեր Եկեղեցու, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ու մայր հայրենիքի հանդեպ եւ ուրախացանք հատկապես Հայաստանից այսքան հեռու մեր երեխաների շուրթերից լսելով մայրենի բարբառը:*

*Հայրապետիս համար հոգու խնդություն է, սիրելինե՛ր, տեսնել ձեր եկեղեցանվեր ու ազգաշահ գործերը, որոնք շենացնում են համայնքային կյանքը, ինչպես նաեւ` ունկնդիր լինել Ավստրալիայում ապրող մեր ժողովրդի հանդեպ հարգանքի ու գնահատանքի խոսքերին, որոնց արժանանում եք այս օրհնյալ երկրում ձեր հավատավոր կյանքով, ձեր գործունեությամբ ու վաստակով: Արդարեւ, հայկական համայնքների մեջ Ավստրալիայի համայնքն ամենաերիտասարդներից է, սակայն ունի ամուր արմատներ եւ ավանդներ, որոնք ձեր` եկեղեցական, ազգային մարմինների, բարերարների նախանձախնդրությամբ ու բարի հավատքով շարունակվում են ու զորանում:*

*Այստեղ նույնպես հեշտ չի սկսվել ձեր հայրերի ու պապերի կյանքը, հեշտ չի ստեղծվել հայկական համայնքը, սակայն առաքյալի խոսքի համաձայն` տկարությամբ սերմանվածը հառնել է զորությամբ (Ա Կորնթ. ԺԵ 43)»*,– ասաց Վեհափառ Հայրապետը` հայ ժողովրդի զավակների հանդեպ դրսեւորած բարեհաճ վերաբերմունքի եւ աջակցության համար երախտագիտության խոսք ուղղելով Ավստրալիայի իշխանություններին` ի դեմս ներկա պետական այրերի: Նորին Սրբությունը նաեւ գոհունակությամբ անդրադարձավ Ավստրալիայում առաքելություն իրականացնող քույր եկեղեցիների եղբայրական սիրուն եւ գործակցությանը, որի դրսեւորումն էր նաեւ 2018 թվականին Ավստրալիայի քրիստոնեական եկեղեցիների պատվիրակության այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ երեկույթի մասնակիցներին տեղեկություններ փոխանցեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեության, առկա առաջնահերթությունների եւ մարտահրավերների մասին:

*«Մայր Աթոռը, սիրելի՛ զավակներ Մեր, առ Տերն ապավինությամբ իրականացնում է իր առաքելությունը` ի սեր հայրենիքում եւ սփյուռքում մեր հոգեւոր եւ ազգային կյանքի զորացման: Առաջնային են մնում եկեղեցականների պատրաստությունը, նոր եկեղեցիների կառուցումը եւ հնագույն մեր սրբատեղիների նորոգումը, որպեսզի զորանա Աստծո խոսքի քարոզչությունը, հնարավոր դառնա աստվածպաշտական արարողություններում մեր ժողովրդի լիարժեք ներգրավումը: Հոգեւոր խոսքը մատուցվում է նաեւ հեռուստաեթերով, ռադիոհաղորդումներով, գրականության հրատարակմամբ: Քարոզչություն եւ հոգեւոր սպասավորություն է իրականացվում նաեւ մեր բանակում, սոցիալական կառույցներում, իրագործվում են կրթական նախաձեռնություններ, աջակցության ծրագրեր` օգնելու կարիքավորներին, ծնողազուրկ երեխաներին: Ձեռքբերումները, որ իրագործվում են նաեւ սփյուռքի հայորդյաց սատարումով եւ աջակցությամբ, առավել լավատեսական են դարձնում Մայր Աթոռի գործունեությունը: Սփյուռքի թեմերում մեր առջեւ ծառացած կարեւոր հրամայականներ են ծուխերի ամրապնդումը, մեր Եկեղեցու կանոնական հիմքերի վրա եկեղեցական կյանքի կազմակերպումը, տարբեր պատճառներով տեղաշարժերի արդյունքում ծնունդ առնող ազգապահպան խնդիրների դիմագրավումը, մեր ժողովրդի զավակների ներգրավումը եկեղեցական համայնքային կյանքում»*,– ասաց Նորին Սրբությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը խոսեց նաեւ հայրենական կյանքի եւ հայրենիքի հանդեպ պատասխանատվության մասին: *«Այսօր, սիրելինե՛ր, հայրենիքում եւ սփյուռքում մեր ժողովուրդն ապրում է բարի սպասումներով, որ կապված են Հայաստանում ընթացող բարեփոխումների, մեր երկրի զարգացման ու առաջընթացի հույսերի հետ: Հայաստանի զարգացումը կենսական կարեւորություն ունի շրջափակման մեջ ապրող հայրենաբնակ մեր ժողովրդի համար, նաեւ Արցախի ապահովության, մեր բանակի հզորության, մեր սահմանների պաշտպանության համար: Հզոր հայրենիքը ազգային մեր կյանքի ապավենն է, մեր իղձերի իրագործման գրավականը: Այժմ սփյուռքում ապրող մեր ժողովուրդն առավել հնարավորություններ ունի իր ավանդը բերելու հայրենիքի կյանքում, որպեսզի հայրենիքով միավորված` կերտի իր առաջընթացը, մարմնավորի իր իղձերը»*,– շեշտեց Հայոց Հայրապետը:

Վեհափառը հայորդիներին հորդորեց զորանալ հավատքով եւ իրենց զավակներին կրթել հավատքով, սնուցել ազգի հանդեպ սիրով, երեխաներին ուսուցանել մայրենի լեզուն, ազգային ավանդները, կրթել եկեղեցասիրությամբ, մայր հայրենիքի սիրով, որպեսզի հետո նույն նախանձախնդրությամբ մասնակցեն եկեղեցական, համայնքային ու ազգային կյանքին: Նորին Սրբությունը պատգամեց հավատարիմ մնալ մեր սրբազան արժեքներին, որդիական ջերմ սիրով ու հավատարմությամբ լեցուն` հանդեպ Հայոց Եկեղեցին եւ զորանալ` իրենց հայացքը պահելով դեպի Սուրբ Էջմիածին եւ հայրենիք, որոնցով միավորված մնալով` մեր ժողովուրդը պիտի տեսնի իր ջանքերի արդյունավորումը, իր նպատակների իրագործումը, իր բարի գալիքը:

Խոսքի ավարտին օրհնելով ներկաներին` Ամենայն Հայոց Կաթողիկոսն աղոթքով հայցեց, որ Տերն Իր շնորհի ներքո պահպանի հայոց ազգը եւ օրհնի հայորդյաց ջանքերը` հանուն մեր Սուրբ Եկեղեցու, մեր նվիրական հայրենիքի, մեր ներկայի ու գալիքի:





## Պաշտոնական ընդունելություն նահանգապետարանում` ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի

Փետրվարի 4-ին Ավստրալիայի Նյու Սաութ Վելսի նահանգային խորհրդարանում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ավստրալիա կատարած հովվապետական այցի առիթով:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին խորհրդարանում դիմավորեց նահանգապետուհի Գլադիս Բերեջիկլյանը:

Ընդունելության ընթացքում Վեհափառ Հայրապետին բարիգալստյան խոսքով ողջունեցին տիկին նահանգապետուհին եւ նահանգային խորհրդարանի նախագահ տիար Ջոն Աջական:

Իր ողջույնի խոսքի մեջ նահանգապետուհին նշեց, որ Վեհափառ Հայրապետին ընդունում է երկու հանգամանքով` եւ՛ որպես պետական բարձրաստիճան պատասխանատու` նահանգապետուհի, եւ՛ որպես հպարտ ու հարազատ զավակ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու:

Այնուհետեւ ընդունելության մասնակիցներին եւ տարբեր եկեղեցիների ու հայկական կազմակերպությունների ներկայացուցիչներին սրտագին բարեմաղթանքներով ողջունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը` շնորհակալություն հայտնելով հանդիպման բարեպատեհ հնարավորության համար:

*«Ձեր միասնական ներկայությունն այս հանդիպմանը գեղեցիկ վկայություն է հայ ժողովրդի, Հայ Եկեղեցու հանդեպ հարգանքի եւ բարեկամության:*

*Աստծո կամոք Մենք վերստին առիթն ունեցանք այցելելու Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի Մեր սիրելի ժողովրդին` բերելու նրանց հայրենիքի, Սուրբ Էջմիածնի լույսն ու օրհնությունը, հայրական Մեր սերը եւ քաջալերանքը` հոգեւոր միասնության, քրիստոնեական արժեքներին հավատարմության մեջ շարունակելու իրենց ազգային-եկեղեցական կյանքի առաջընթացը:*

*Մենք եկել ենք նաեւ Հայ Եկեղեցու եւ Մեր ժողովրդի երախտագիտությունը հայտնելու Ավստրալիո կառավարությանը, նահանգային, քաղաքային բարեսեր իշխանություններին, որ բարյացակամությամբ աջակցում են հայ համայնքին` այս գեղատեսիլ մայր ցամաքում կազմակերպելու ու զորացնելու հայոց ազգային-եկեղեցական կյանքը: Ավստրալաբնակ հայորդիները, ի գնահատումն իրենց հանդեպ դրսեւորված բարեկամական ու սիրառատ վերաբերմունքի, իրենց ձեռքբերումներն ու հաջողությունները ծառայեցնում են հյուրընկալ այս պետության բարգավաճմանը, հասարակական կյանքի զարգացմանը, մշակույթին ու գիտությանը: Այսպիսի հիանալի օրինակ է Նյու Սաութ Ուելս նահանգի վարչապետի բարձր պաշտոնն ստանձնած մեծազնիվ տիկին Գլադիս Բերեջիկլյանի գովարժան եւ արդյունավոր գործունեությունը, որը մեր ժողովրդի դուստրը եւ մեր Սուրբ Եկեղեցու հարազատ զավակը լինելով` իր կարեւոր գործունեությամբ տարիներ շարունակ մեծ ներդրում է բերում Ավստրալիայի քաղաքական եւ հասարակական կյանքի առաջընթացին:*

➥ *էջ 5*



# ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԸ ԱՎՍՏՐԱԼԻԱ

⮨ էջ 4

*Մենք մեծ ուրախությամբ տիկին Գլադիս Բերեջիկլյանին հանդիպել ենք հայրենի մեր երկրում՝ զգալով նրա հավատքի ու աստվածսիրության ջերմությունը, ազգասիրությունն ու հայրենասիրությունը: Հպարտ ենք, որ մեր ժողովուրդն ունի այսպիսի օրինյալ զավակներ, որոնք իրենց կյանքով ու գործով հավելում են պատիվն ու հեղինակությունը մեր ժողովրդի:*

*Մեզ համար, սիրելինե՛ր, որպես Հայ Եկեղեցու հոգեւոր պետի եւ առաջին սպասավորի, հոգու բերկրանք է տեսնել այն սերն ու հարգանքը, որ մեր ժողովրդի զավակները՝ իբրեւ արժանավոր եւ օրինապահ քաղաքացիներ, վայելում են Ավստրալիայում»,–* ասաց Վեհափառ Հայրապետը:

Իր խոսքում Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց նաեւ դարերի ընթացքում հայ ժողովրդի կողմից դիմագրաված փորձություններին եւ հայրենիքի առջեւ ներկայումս ծառացած մարտահրավերներին: *«Դարերի ընթացքում մեր ժողովուրդը քրիստոնական իր հավատքով ստեղծեց բարձր մշակույթ, գիր ու դպրություն, հաղթահարեց բազում փորձություններ ու ավերներ, վերապրեց Օսմանյան կայսրության կողմից իրականացված ցեղասպանությունը եւ այսօր իր նոր կյանքի հաղթանակներն ու հաջողություններն է կերտում: Լինելով վերստին անկախացյալ երիտասարդ պետություն, դիմագրավելով արդի ժամանակի մարտահրավերներն ու խնդիրները, Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից շրջափակումը, Հայաստանի ու Արցախի սահմաններում պատերազմական իրավիճակը՝ Հայաստանն իր հաստատուն քայլերն է կատարում՝ որպես ազատ, ժողովրդավար եւ իր հարեւաններ ի հետ խաղաղության ու համերաշխության ձգտող պետություն: Հայ ժողովրդի առջեւ կանգնած է նաեւ Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման եւ արցախահայության ազատ ու անկախ կյանքի արդար իրավունքի հաստատման կարեւորագույն խնդիրը: Արցախի պետությունը պատմական Հայաստանի մաս եւ հայոց հող լինելով՝ Խորհրդային իշխանությունների կողմից բռնակցվել էր Ադրբեջանին, սակայն ինքնորոշման արդար սկզբունքով Արցախը հաստատեց իր անկախությունը եւ այսօր պայքարում է ազատ ապրելու իր իրավունքը պաշտպանելու համար»,–* նշեց Վեհափառ Հայրապետը:

Խոսելով ավստրալահայ համայնքի ազգային ու հոգեւոր կյանքի մասին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հաստատեց, որ հայորդիների աշխույժ գործունեությունը նաեւ մեծ ու կարեւոր նպաստ է Հայաստանի եւ Ավստրալիայի փոխհարաբերությունների եւ փոխգործակցության ամրապնդմանը: Վեհափառը հույս հայտնեց, որ երկրների բարեկամությունն ու համագործակցությունն առավել կարդյունավորվեն դիվանագիտական առաքելությունների գործունեությամբ, եւ Հայաստանի Հանրապետության եւ Ավստրալական Միության պատկան մարմինները առաջիկայում համապատասխան քայլեր կնախաձեռնեն դիվանագիտական կապերի հաստատման համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Տերն Իր երկնառաք շնորհները բաշխի Ավստրալիային եւ նրա ժողովրդին՝ պահելով սիրո, խաղաղության եւ համերաշխության մեջ:

## Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Սիդնեյի կաթոլիկ Մայր տաճար

Փետրվարի 4-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը շքախմբի ուղեկցությամբ այցելեց Սիդնեյի Ս. Աստվածածին կաթոլիկ Մայր տաճար: Այս տաճարում Հայոց ցեղասպանության 100-ամյակի առիթով Պատարագ մատուցեց Հայկազուն արք. Նաջարյանը՝ ներկայությամբ շուրջ 2000 հավատացյալների եւ հանդիսապետությամբ Սիդնեյի կաթոլիկ թեմի առաջնորդ Էնթոնի արք. Ֆիշըրի:

Առաջնորդարանում Վեհափառ Հայրապետին ողջունեցին Մայր տաճարի լուսարարապետ հայր Դոն Ռիչըրդսոնը եւ օգնական եպիսկոպոս Ռիչըրդ Ամբըրգը:

Կատարվեց շրջապտույտ, Հայոց Հայրապետին ներկայացվեց ազգային ժառանգություն նկատվող տաճարի երկհարյուրամյա պատմությունը:

Շրջապտույտի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետն աղոթք բարձրացրեց տաճարի մուտքին 2018 թվականի դեկտեմբերի 18-ին հայոց մեծ բարեկամ Էնթոնի արք. Ֆիշըրի ջանքերով եւ տեր եւ տիկին՝ Ստեփան եւ Հիլդա Գրքաշարյանների նվիրատվությամբ զետեղված հայկական խաչքարի առջեւ՝ նվիրված Հայոց ցեղասպանության հիշատակին:

Այցի առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը հարցազրույց տվեց Սիդնեյի կաթոլիկ առաջնորդարանի «Catholic Weekly» թերթին: Այնուհետեւ հայրապետական շքախմբի անդամների, թեմական եւ ծխական մարմինների անդամների եւ ազգային բարերարներ տեր եւ տիկին՝ Հայկ եւ Էլզա Դիդիզյանների ներկայությամբ տեղի ունեցավ նվերների փոխանակում: Լուսարարապետին ընծայվեց Սուրբ Էջմիածնի եւ Արարատի մանրանկար, իսկ օգնական եպիսկոպոսին՝ սուրբծննդյան պատկեր:





## Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Համազգայինի Արշակ եւ Սոֆի Գալստյան ճեմարան

Փետրվարի 5-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Համազգայինի Արշակ եւ Սոֆի Գոլստըն ճեմարան՝ ուղեկցությամբ իր շքախմբի եւ Ավստարալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Հայկազուն արք. Նաջարյանի:

Կրթական հաստատության առջեւ Հայոց Հորն աղ ու հացով դիմավորեցին ճեմարանի տնօրեն Էդի Դեմիրճյանը, ուսուցչական կազմը եւ շուրջ 350 աշակերտ: Աղ ու հացի արարողությունից հետո ամենքը մեկտեղվեցին ճեմարանի դահլիճում:

Ճեմարանի տնօրենի ողջույնի խոսքից հետո աշակերտները ներկայացան գեղարվեստական հայտագրով՝ մեծ գոհունակություն եւ ուրախություն պարգեւելով Ամենայն Հայոց Հայրապետին:

Հայտագրի ավարտին Հայկազուն սրբազանը հրավիրեց Նորին Սրբությանը՝ իր հայրական օրհնությունը բաշխելու աշակերտներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր ուրախությունը հայտնեց վարժարանում երրորդ անգամ գտնվելու եւ պատանի հայորդիների պայծառ դեմքերը, սրտի ու հոգու ջերմությունը տեսնելու առիթով՝ մասնավորապես վերհիշելով իր մեկօրյա այցելությունն Ավստրալիա՝ կրթօջախի 20-ամյակի միջոցառումներին մասնակցելու նպատակով:

Նորին Սրբությունն ընդգծեց, որ մշտապես հետաքրքրվում է վարժարանի գործունեությամբ, հաստատության առջեւ բացվող հեռանկարներով, հետեւում է արձանագրվող հաջողություններին՝ գոհունակությամբ արձանագրելով, որ հաստատությունը շարունակում է հայ համայնքի սիրո, գուրգուրանքի առարկան մնալ, եւ հայ ծնողներն իրենց զավակներին հայկական դպրոց ուղարկելու նախանձախնդրություն ունեն:

*«Դուք գիտեք, որ մեր ժողովուրդն առանձնահատուկ կարեւորություն է ընծայել դպրոցին, կրթությանը: ...Բայց հայ դպրոցը միայն գիտելիք չէ, որ ջամբում է մեր զավակներին, հայ դպրոցը ոգին է կերտում հայորդու: Ահա այսօր, երբ մենք ունկնդրում էինք մեր անուշիկ բալիկների կատարումները, այդ կատարումներում տեսանելի էր մանկավարժների ձգտումը հայ երեխայի, հայ պատանու սիրտը շաղախել հայրենասիրության ջերմ զգացումներով, կապել մեր զավակների հոգին իրենց հայրենիքին, պատմությանը, իրենց անցյալին, այն հարուստ ժառանգությանը, որով դարերի մեջ կարողացել է գոյատեւել մեր ժողովուրդը, դիմակայել բոլոր դժվարություններին ու փորձություններին»,–* ասաց Վեհափառ Հայրապետը:

Անդրադառնալով հայրենիքի հետ կապի կարեւորությանը՝ Նորին Սրբությունն արձանագրեց. *«Այստեղ մանուկ երեխաներ քաղցրաբարբառ արտասանում էին, որ սիրում են Հայաստանը: Այդ բառերի մեջ, անշուշտ, Հայաստանն է պատկերվում, Հայաստանն է ներկայանում յուրաքանչյուրին: Հոգ չէ, որ նրանք գրքերից են ընթերցել Հայաստանի մասին, գրքերի միջոցով եւ իրենց ծնողների պատմություններով են ծանոթ Հայաստանին, բայց սերը հոգի է տալիս, ուժ է տալիս, սերը կամք է կերտում այդ երեխաների մեջ, որ նրանք Հայաստանի զավակը լինեն՝ ապրելով Ավստրալիայում՝ Հայաստանով ապրեն, Հայաստանով շնչեն, Հայաստանով երազեն եւ Հայաստանով կերտեն իրենց հաջողություններն այս կյանքում, լինեն Հայաստանի արժանավոր զավակներն ու քաղաքացիները»:*

Ամենայն Հայոց Կաթողիկոսը վարժարանի աշակերտների հետ խոսեց եկեղեցի այցելելու, աղոթելու, աստվածպաշտությանը եւ արարողություններին մասնակցելու կարեւորության եւ դպրոց-եկեղեցի կապի մասին:

*«Դպրոցը միայնակ չի կարող իրականացնել, ամբողջացնել, կերտել այն տեսիլքը, որ մենք ունենք՝ արժանավոր, գիտակից, հայրենասեր, հայրենյաց ժառանգության, մեր ժողովրդի լուսավոր վաղվա օրվա նկատմամբ նախանձախնդրություն ունեցող հայորդու: Ազգի արժանավոր զավակ կրթելու, դաստիարակելու գաղափարը կարող է ամբողջանալ միայն, երբ մեր զավակների կյանքում ներկայություն են ե՛ւ դպրոցը, ե՛ւ Եկեղեցին: Շատ գնահատելի է, շատ ուրախ ենք եւ անչափ երջանիկ, որ մեր երեխաներն այստեղ սովորում են հայոց լեզուն, հաղորդ են դառնում մեր պատմությանը, եւ Եկեղեցու մեջ նույնպես ամբարված են մեր արժեքները, պատմությունը:*

⮩ էջ 6



# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ



⮨ էջ 5

*եկեղեցին նույնպես, եւ առաջին հերթին այս իմաստով, մեր ազգի գանձարանն է, եկեղեցին մեր գոյության, լինելիության եւ հարատեւության խորհուրդն է կրում: Փաստն անցյալի պատմությունն է»*,– շեշտեց Նորին Սրբություն Գարեգին Բ Կաթողիկոսը՝ հորդորելով երիտասարդներին ամուր պահել կապը եկեղեցու հետ, եկեղեցում ճանաչել Աստծուն, դառնալ Աստծո զավակ եւ լինել Աստծո ժողովուրդ՝ արժանանալու երկնատուր շնորհների եւ հաղթանակների իրենց կյանքում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր մասնավոր գնահատանքը բերեց ճեմարանի հոգաբարձության, տնօրենության անդամներին, կրթօջախի տնօրենին, մանկավարժներին ու ծնողներին՝ իրենց հանձնառության եւ նվիրյալ աշխատանքի համար: Նորին Սրբությունն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց նաեւ Հայկազուն սրբազանին, թեմական խորհրդին, ծխական խորհրդի անդամներին եւ եկեղեցականներին, որոնք ջերմ սիրով ծառայություն են բերում ժողովրդին, որպեսզի շարունակի ապրել իր հայաշունչ կյանքը Ավստրալիայի հեռավոր ափերում:

Հրաժեշտ տալով ուսումնական հաստատությանը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ասաց. *«Սիրելինե՛ր, եկել ենք այստեղ ասելու, որ սիրում ենք ձեզ, սիրում ենք բոլորին՝ այս հաստատության մեջ ծառայություն մատուցող անձանց, սիրում ենք ծնողներին, որոնք ամեն հանձնառություն ստանձնած, ամեն զոհողության գնով իրենց զավակներին բերում են այս դպրոց: Մենք սիրում ենք այս հաստատության սաներին, որ լույսն են, հույսն են հայ կյանքի եւ գեղեցկացնում ու ջերմացնում են հայ կյանքն իրենց ներկայությամբ, իրենց հոգու ջերմությամբ՝ իրենց մեջ կրելով մեր ժողովրդի վաղվա լուսավոր օրը:*

*...Մենք մեկնում ենք՝ մեզ հետ տանելով ձեզ, մեր սրտում ու հոգում կրելով այս գեղեցիկ պատկերը, ձեզանից յուրաքանչյուրին եւ մշտապես պիտի լինենք ձեզ հետ մեր աղոթքներում, մտածումներում, մեր ծառայության եւ առաքելության մեջ: Ավելիով պիտի տքնենք, ավելիով պիտի ջանանք ձեզ համար, որպեսզի դուք այստեղ շարունակեք ձեր ազգաշեն, հայրենանվեր, ձեր աստվածահաճո այս բարի առաքելությունը: Աստված թող օրհնի ձեզ: Մեր գնահատանքը, սերը ձեզ ամենքիդ: Մնացեք խաղաղությամբ, մնացեք Տիրոջ սիրո մեջ»:*

Այցելության առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը բոլոր աշակերտներին ընծայեց Սուրբ Էջմիածնից բերված խաչիկներ: Ճեմարանին փոխանցվեց «Սրբոց Նահատակաց» մանրապատկեր:

## Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց ՀԲԸՄ-ի «Ալեքսանդր» վարժարան եւ տարեցների համանուն տուն

Փետրվարի 6-ին Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց ՀԲԸՄ-ի «Ալեքսանդր» վարժարան՝ շքախմբի, Ավստարալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Հայկազուն արք. Նաջարյանի եւ թեմի եկեղեցականների ուղեկցությամբ:

Վարժարանի առջեւ Նորին Սրբությանը դիմավորեցին կրթօջախի հիսուն սան, ՀԲԸՄ-ի Սիդնեյի մասնաճյուղի ատենապետ տիար Միհրան Լեփեճյանը, հոգաբարձական կազմը՝ ղեկավարությամբ ատենապետուհի տիկին Սոսի Կիրակոսյանի, տնօրեն Մանուկ Դեմիրճյանը, ուսուցիչներ եւ ծնողներ: Աղ ու հացի օրհնությունից հետո վարժարանի դահլիճում տեղի ունեցավ բարիգալստյան հանդիսություն: Հնչեցին Ավստրալիայի եւ Հայաստանի օրհներգերը, ապա Վեհափառ Հորը բարի գալուստ մաղթեցին պարոն Սարգիս Մանուկյանը եւ աշակերտներից Սամսոն Բանիքյանը:

Վարժարանի տնօրեն Մանուկ Դեմիրճյանն իր խոսքում ներկայացրեց վարժարանի առաքելությունը, անցած պատմական ուղին՝ լուսանկարների ցուցադրությամբ իրար հետ առնչելով Վեհափառի առաջին այցելությունը եւ վարժարանի կապը հայրենիքի եւ մանավանդ Ս. Էջմիածնի հետ, ընդգծելով կրոնաբարոյական դաստիարակությունը, որ կրթականի եւ ազգայինի հետ մեկտեղ կատարվում է ամենայն բծախնդրությամբ:

Այնուհետեւ վարժարանի աշակերտները հանդես եկան գեղարվեստական հայտագրով՝ իրենց երգերով եւ արտասանություններով զարմանք պատճառելով Վեհափառ Հայրապետին, հոգեւորականաց դասին եւ ներկաներին:

Այս առիթով իրենց խոսքը մանուկներին ու պատանիներին ուղղեցին Նաթան արք. Հովհաննիսյանը եւ թեմի բարեխնամ առաջնորդ Հայկազուն արք. Նաջարյանը՝ մասնավորաբար գնահատելով մատղաշ սերնդի ելույթը եւ սրտի անհուն գոհունակությամբ հաստատելով, որ ապագան այս ընթացքով հաստատուն է ու փայլուն, եւ հակառակ հեռավորության՝ հայրենիքը՝ ներկա:

Խոսքի ավարտին Հայկազուն սրբազանը հրավիրեց Նորին Սրբությանը՝ իր հայրական օրհնությունը բաշխելու վարժարանի աշակերտներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ուրախություն հայտնելով կրթօջախի լուսավոր հարկի ներքո գտնվելու հնարավորության համար, նշեց, որ յուրաքանչյուր հայորդի, իր հայացքն ուղղելով Հայոց Հայրապետին, նրա անձի մեջ մարմնավորված է տեսնում Հայաստանն ու Ս. Էջմիածինը: Դա ճշմարիտ նկատելով Ավստրալիայի հեռավոր ափերում բնակվող հայորդիների համար՝ Նորին Սրբությունը հաստատեց. *«Մենք Հայաստանն ու Ս. Էջմիածինը տեսնում ենք այստեղ՝ ձեր մեջ: Հայաստանն այստեղ փոքրիկ անուշիկ զավակներն եք: Այստեղ Հայաստանի շունչ է, տեսիլքն է, Հայաստանի հույսն է, որ այս երեխաների անձերի մեջ է կերպավորված, այս մանուկների անձերով է ներկայանում մեզ... Այս երխաները մեր Ս. Էջմիածինն են, այս երեխաները կերպավորում են այդ սրբությունը ու նվիրականությունը: Այս երեխաները նաեւ այս կառույցն են, երաշխավորն են այս կառույցի հարատեւության: Այս երեխաներով այս գաղութն ապրելու է, ...նրանք պիտի հասակ առնեն, ընտանիք կազմեն, զավակներ ունենան: Եվ իրենց զավակներին պիտի ցանկան առաջնորդել այս հաստատություն՝ «Ալեքսանդր» վարժարան, որովհետեւ այստեղ նրանք գուրգուրանք ու սեր են տեսել, այստեղ նրանք կայացել ու ձեւավորվել են, այստեղ նրանք իրենց նկարագիրը, հայկական ոգին, հայկականության կերպարն են ստացել, այստեղ կերտվել են որպես ազգի զավակներ»:*

Անդրադառնալով աշակերտների տպավորիչ ելույթներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց, որ ճշմարիտ հայրենասիրությունն այն աշխատանքն է, որ այսօր տարվում է համայնքի մանուկների հետ, որի շնորհիվ նրանք հասակ են առնում որպես հայաշունչ, հայրենասեր, ազգասեր, ազգին պատիվ բերող հայորդիներ, ազգի կյանքը դեպի հավերժություն տանող ազգի զավակներ: *«Ավելի մեծ հայրենասիրություն, ավելի մեծ ազգասիրություն, ավելի մեծ աստվածսիրություն եւ էջմիածնասիրություն գոյություն չունի, քան այն աշխատանքը, որ իրականացնում են մանկավարժները մեր զավակների հետ:*



*...Մենք ծափահարում էինք երեխաների տաղանդի դրսեւորման համար, բայց առավել չափով ծափահարում էինք իբրեւ գնահատանք այն աշխատանքի, որ իրականացվում է այս հարկի ներքո ողջ անձնակազմի կողմից: Ինչ ահռելի աշխատանք, ինչպիսի՜ ահռելի ծավալ: Որքա՜ն նվիրում, որքա՜ն համբերություն, որքա՜ն սեր, որքա՜ն ներդրում, որքա՜ն հանձնառության, զոհաբերության ոգի է անհրաժեշտ, որպեսզի երեխաներին մատուցես այս ամենը, որ երեխան հիշի, մտաբերի եւ արտաբերի այնքան սիրով»*,– հավելեց Հայոց Հայրապետը՝ իր գնահատանքն ու օրհնությունը փոխանցելով մանկավարժներին, հոգաբարձուներին եւ տնօրենին, նաեւ շնորհակալություն հայտնելով բոլոր այն անձանց, որոնք իրենց աշխատանքը, իրենց ժամանակն ու կյանքն ընծայաբերում են հայ մանուկին, հայոց ազգի ու Հայաստանի հավերժության, Ս. Էջմիածնի հավերժական գոյության համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշեց, որ այստեղ դրսեւորված սերն իր հոգում պիտի տանի եւ դարձնի աղոթք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Իջման ս. Սեղանի առջեւ՝ ավստրալահայության եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդի համար, որպեսզի ապրեն երկնատուր շնորհների ներքո եւ կերտեն Հայաստանի, Ս. Էջմիածնի եւ համայն հայության լուսավոր կյանքը:

Այցի առիթով Վեհափառ Հայրապետը նվերներ փոխանցեց վարժարանին եւ տնօրինությանը, իսկ մանուկներին ընծայեց Սուրբ Էջմիածնի խաչիկներ:



Նույն օրը Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց «Ալեքսանդր» հայկական հանգստյան տուն: Տնօրինության եւ խնամակալ մարմնի ուղեկցությամբ Նորին Սրբությունը շրջապտույտ կատարեց, առանձնաբար իր հայրական օրհնությունները բաշխեց հաստատության մեջ խնամվող տարեցներին: Աղոթքից հետո Վեհափառ Հայրապետը զրուցեց հայորդիների հետ, բարձր գնահատեց խնամակալ խորհրդի հոգատար աշխատանքը, ձեռքբերումները եւ աստվածահաճո գործունեությունը:

Ի հիշատակ իր այցելության՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանգստյան տանը նվիրեց Տիրոջ Վերջին ընթրիքի սրբապատկեր:

## Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Սիդնեյի հայկական կազմակերպությունների ներկայացուցիչներին

Փետրվարի 5-ին եւ 6-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն Ավստարալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդարանում ընդունեց հայկական կազմակերպությունների ներկայացուցիչներին: Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը եւ Ավստարալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Հայկազուն արք. Նաջարյանը:

Վեհափառ Հայրապետին այցելել էին Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության՝ Ավստրալիայի վարիչ կազմի, Հայ հեղափոխական դաշնակցության՝ Ավստրալիայի Կենտրոնական կոմիտեի, Ռամկավար ազատական կուսակցության՝ Ավստրալիայի վարիչ մարմնի, Համազգային հայ կրթական եւ Մշակութային միության, Հայ օգնության միության շրջանային վարչությունների, Ավստրալիայի՝ Հայ դատի հանձնախմբի, Հայկական բարեգործական ընդհանուր միության՝ Սիդնեյի մասնաճյուղի վարչության, եկեղեցական վարչության, Ավստրալիայի Հայ ավետարանչական ընկերակցության վարչության ներկայացուցիչները, Հայ Ավետարանական եկեղեցու հոգեւոր հովիվը, ինչպես նաեւ Ավստրալիայում Արցախի մնայուն ներկայացուցիչը:

⮩ էջ 7

# ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԸ ԱՎՍՏՐԱԼԻԱ



⮨ էջ 6

Հանդիպման ընթացքում հայկական կազմակերպությունների ներկայացուցիչներն իրենց զորակցությունը հայտնեցին Հայաստանյայց Առաքելական եկեղեցուն եւ պատրաստակամությունը՝ միասնական ճիգերով առաջ տանելու ազգային աշխատանքները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ծանոթանալով յուրաքանչյուր կազմակերպության ծավալած գործունեությանը, նրանց փոխանցեց իր հայրական օրհնությունն եւ հաջողության մաղթանքները:

## Հրաշափառի արարողություն Մելբուռնի Ս. Աստվածածին հայկական եկեղեցում

Փետրվարի 8-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ուղեկցությամբ Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Հայկազուն արք. Նաջարյանի եւ իր շքախմբի, Սիդնեյից մեկնեց Ավստրալիայի հայաշատ երկրորդ քաղաքը՝ Մելբուռն:

Փետրվարի 9-ի առավոտյան Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Մելբուռնի Ս. Աստվածածին հայկական եկեղեցի, որտեղ տեղի ունեցավ Հրաշափառի արարողություն:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին մեծ խանդավառությամբ դիմավորեցին այս օրհնյալ առիթով եկեղեցում համախմբված Մելբուռնի հայ համայնքի ներկայացուցիչները՝ առաջնորդությամբ հոգեւոր հովիվ Խաչեր քհն. Հարությունյանի եւ եկեղեցու ծխական խորհրդի:

Աղ ու հացի արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը, օրհնելով ժողովրդին, թափորով, Հրաշափառի ներքո առաջնորդվեց եկեղեցի, ուր կատարվեց համատեղ աղոթք:

Այնուհետեւ ներկա հավատավոր ժողովրդի անունից Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետական այցը Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմ, մասնավորաբար՝ Մելբուռն, ողջունեց Հայկազուն սրբազանը՝ ընդգծելով Հայոց Հոր այցերի կարեւոր նշանակությունը հայ համայնքի համար եւ հրավիրելով Նորին Սրբությանն իր օրհնությունն ու պատգամը բերելու բարեպաշտ ժողովրդին:

Դիմելով հավատավոր հայորդիներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուրախություն հայտնեց, որ Աստծո կամոք վերստին այցելել է նրանց՝ բերելու իր հայրական սերը, հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնությունները: Հայոց Հայրապետը հաստատեց, որ ուրախության նույն զգացումով օրեր առաջ հանդիպել է Սիդնեյում բնակվող հայորդիներին, նրանց հետ միասնաբար աղոթել եկեղեցու խնկաբույր հարկի ներքո, այցելել կրթական եւ բարեսիրական հաստատություններ, հանդիպումներ ունեցել երիտասարդների, տարեցների, ազգային կառույցների եւ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների հետ, հաղորդ դարձել ավստրալահայ համայնքում արձանագրված ձեռքբերումներին ու հաջողություններին:

Նորին Սրբությունը նշեց, որ Ավստրալիայում թեմական ու ծխական կյանքի աշխուժությունը, հոգեւոր-եկեղեցական անդաստանի բարեզարդությունը Աստծուց օրհնյալ պտուղներն են Ավստրալիայում բնակվող մեր ժողովրդի զավակների աստվածսիրության ու ազգանվեր կյանքի:

*«Սիրելինե՛ր, Ձեզ հետ միասնական աղոթքի այս խորհրդանշական պահին սրբազան Պատարագի աղոթքն ենք բարձրաձայնում՝ հայցելով Տիրոջ բարիքներն ու պահպանությունը մեր ժողովրդին. «Տէ՛ր Աստուած մեր, կեցո՛ զժողովուրդս Քո, եւ օրհնեա՛ զժառանգութիւնս Քո. զլրումն Եկեղեցւոյ Քո պահեա՛»: Աստծո սուրբ Աջի պահպանության ներքո է եղել դարերի մեջ ընթացքը մեր ժողովրդի, որ դժվարություններ է կրել, փորձություններ հաղթահարել, սակայն իր հավատքի շնորհիվ միշտ մնացել է տոկուն ու հուսառատ եւ ձեռքբերումներով զարդարել իր կյանքը: Հայրենիքից հեռու սփռվելով՝ մեր ժողովրդի զավակները շեն ու պայծառ համայնքներ են կերտել՝ բարեզարդ եկեղեցիներով, կրթարաններով, ազգային ու մշակութային հաստատություններով: Աշխարհի տարբեր երկրներում հայ համայնքները, հիրավի, մեր ժողովրդի ինքնության նվիրական օրրաններ են, որոնք իրենց յուրահատկությամբ ու ավանդույթներով հարստացնում են մեր ժողովրդի պատմությունը եւ իրենց բերած նպաստով սատար լինում նաեւ մեր հայրենիքի առաջընթացին ու զորացմանը: Այս իրականության առջեւ տեսանելի է, որ մեր ժողովրդի կրած նեղությունները, ողբերգությունները փոխատուցվում են երկնաշնորհ ձեռքբերումներով, քանզի Տերն օրհնում ու ապրեցնում է Իրեն հավատարիմ ժողովրդին»,*– ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ հավելելով, որ աստվածային զորակցությամբ եւ իրենց հավատքի, ազգասիրության ու եկեղեցասիրության շնորհիվ է, որ հայրենիքից հեռու կարողանում են պահպանել ազգային ինքնությունը, շեն պահել հայ համայնքը, եկեղեցիները եւ ազգային կառույցները:

Նորին Սրբությունը կոչ արեց կյանքում առկա մարտահրավերները հաղթահարել Տիրոջ հանդեպ հավատարմությամբ: *«Ձեր ու ձեր զավակների ազգային եւ եկեղեցական կյանքն անսասան կլինի մեր հայրերի հավատքին, սրբազան արժեքներին հավատարիմ բարեպաշտ ընթացքով՝ ամենայն հարգանքով հանդերձ այլ ժողովուրդների եւ նրանց մշակութային առանձնահատկությունների հանդեպ:*

*Մեր Սուրբ Եկեղեցին իր յուրաքանչյուր զավակի հույսի ապաստանն է, մեղքի քավարանը, մշտական բաշխողը աստվածային ողորմությունների, երկնային անսպառ օրհնությունների ու շնորհների: Մեր եկեղեցու հովանու ներքո է ամուր մնում ձեր հաղորդակցությունը հոգեւոր արժեքներին, հայրենիքին, ազգային արմատներին ու պատմությանը: Հոգեկերտ այդ ակունքներից սնվելով՝ դուք համայնքում պիտի շարունակեք արդյունավորել մեր մանուկներին կրթող հաստատությունների, ազգային, մշակութային կազմակերպությունների գործունեությունը, նաեւ նախանձախնդրորեն ձեր ավանդը բերել հայրենական մեր կյանքին: Այն մեծ տարածությունը, սիրելինե՛ր, որ բաժանում է ձեզ Հայաստանից, երբեք չի կարող բաժանել ձեր սրտերը հայրենիքից, հայրենի հողից եւ հայրենյաց ժառանգությունից, մեր հոգեւոր նվիրական կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից:*

*«Ուր ձեր գանձերն են, այնտեղ եւ ձեր սրտերը կլինեն» (Մատթ. Զ 21),– ասում է մեր Տեր Հիսուս Քրիստոս: Եվ ձեր սերն ու մտահայացքը, արդարեւ, ուղղված են դեպի մեր հոգեղեն գանձերը, դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին եւ Հայաստան հայրենի մեր երկիրը, որտեղ ձեր եղբայրներն ու քույրերը հավատքով համախումբ, հույսով ու լավատեսությամբ, քաջարի սրտով արարում եւ կերտում են մեր նոր կյանքը, լուսավոր ապագան մեր ժողովրդի: Արդ, սիրելինե՛ր, միշտ ապրեք պայծառ հավատքով, հաստատուն պահեք ձեր հայրնանվիրումն ու ազգասիրությունը եւ շարունակեք գովարժան ընթացքով ու գործերով մասնակցություն ու ներդրում բերել հայրենիքի առաջընթացին ու բարգավաճմանը՝ մնալով հարազատ ու արժանավոր զավակները մեր ժողովրդի եւ Առաքելական մեր Մայր եկեղեցու»,*– նշեց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունն իր գնահատանքը բերեց թեմակալ առաջնորդ Հայկազուն արք. Նաջարյանին, բարեջան հոգեւոր դասին եւ նրանց առաքելությանն աջակցող թեմական ու ծխական խորհրդների, կրթական, ազգային, մշակութային հաստատությունների պատվարժան անդամներին ու աշխատակիցներին:

Հայոց Հայրապետն իր օրհնությունն ու գնահատանքը փոխանցեց նաեւ թեմական խորհրդին եւ բոլոր այն նվիրյալ անձանց, որոնք միասնաբար ու նվիրումով աշխատանք տարան հովվապետական այցելությունը Ավստրալիա ու հավատավոր հայորդիների հետ հանդիպումը կազմակերպելու համար:



Վերջում առ Աստված աղոթքով Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ միշտ պայծառ ու շեն լինի Ավստրալիայի հայ համայնքը, առատանա նորանոր ձեռքբերումներով, եկեղեցաշեն ու ազգանպաստ հաջողություններով եւ աստվածային օրհնություններն ու երկնաheղ բարիքներն անպակաս լինեն հայորդիներից եւ նրանց ընտանիքներից:

Հայրապետական Պահպանիչ աղոթքից հետո ժողովուրդը հնարավորություն ստացավ համբուրելու Վեհափառ Հոր Աջը եւ նրանից ստանալու նվեր խաչիկներ՝ իբրեւ օրհնություն Ս. Էջմիածնի:

Հրաշափառի արարողության ավարտին եկեղեցու կից սրահում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ «Ակինյան» եւ Համազգայինի «Մեսրոպ Մաշտոց» մեկօրյա վարժարանների աշակերտների հետ:

Երկու կրթօջախների տնօրենների բարիգալստյան ջերմ խոսքերից հետո աշակերտները հանդես եկան գեղարվեստական փոքրիկ հայտագրով:

Այնուհետեւ մանուկներին իր հայրական օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ պատգամելով լինել մեր սուրբ նախնյաց արժանավոր ժառանգները, իրենց բարեջան եւ ուշիմ ուսումնառությամբ դառնալ ազգի նվիրյալ զավակներ՝ կերտելու հայոց բարօր ու պայծառ կյանքը:

Նորին Սրբությունը նաեւ իր օրհնությունը բերեց վարժարանների տնօրինությանը եւ մանկավարժներին՝ բարձր գնահատելով մատաղ սերնդի հայեցի դաստիարակության գործում իրենց կողմից ներդրվող անդուլ ջանքերը, հանձնառությունն եւ նվիրումը:



## Հայրապետական Պատարագ Մելբուռնի Ս. Աստվածածին եկեղեցում

Փետրվարի 10-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը սուրբ Պատարագ մատուցեց Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի Մելբուռն քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցում:

Պատարագի սրբազան արարողությանը ներկա էին թեմական խորհրդի եւ ծխական եկեղեցական վարչության անդամներ, քույր եկեղեցիների ներկայացուցիչներ, հայկական կազմակերպությունների ղեկավարներ եւ հավատավոր բազում հայորդիներ:

Թափորը, որին մասնակցում էին նաեւ քույր եկեղեցիների հոգեւորականներ, եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ամպհովանիի ներքո, առաջնորդվեցին դեպի եկեղեցի, ուր Վեհափառ Հայրապետի ձեռամբ մատուցվեց Պատարագ:

Պատարագին, որպես առընթերականներ, սպասավորում էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի պատասխանատու Նաթան արք. Հովհաննիսյանը եւ Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Հայկազուն արք. Նաջարյանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերստին իր օրհնությունն ու պատգամը բերեց մելբուռնաբնակ հայությանը:

*«Անհուն ուրախությունն է այսօր Մեր հոգում, որ Տիրոջ շնորհով այցելել ենք ձեզ եւ բերել ողջույններ հայրենի եզերքներից, ձեր եղբայրներից ու քույրերից, բերել ենք ձեզ Սուրբ Էջմիածնի լույսն ու օրհնությունը, օրհնությունները մեր դարավոր սրբավայրերի:*

*Մեր հոգում ջերմ են հիշողությունները տարիներ առաջ ձեզ հետ հանդիպման:*

⮩ էջ 8

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑՆ ԱՎՍՏՐԱԼԻԱ



էջ 7

*Նույն զգացումներով այսօր համախմբված ենք այս խնկաբույր եկեղեցու օրհնյալ կամարների ներքո՝ միասնաբար փառաբանություն վերառաքելու առ Աստված եւ վերապրելու բերկրանքը մեր հանդիպման»*,– նշեց Նորին Սրբությունը՝ գոհություն հայտնելով Տիրոջը, որ Ավստրալիայի հայ համայնքում զորանում են հավատքը, հույսն ու սերը, եւ կարեւորվում է նախանձախնդրությունը նախնյաց ավանդների ու սրբազան ժառանգության հանդեպ, որ Ավստրալիայի Մելբուռն քաղաքում, սփյուռքի տարբեր համայնքներից համախմբված հայորդիները շարունակում են իրենց հայրերի բարեպաշտ ընթացքն ու ավանդույթները՝ զորացնելով դրանք համայնքային միասնական կյանքի մեջ, դաստիարակություն են տալիս նոր սերնդին, սովորեցնում դեպի եկեղեցի տանող ուղին, վարժարանների հարկի ներքո հաղորդ դարձնում մեր դարավոր պատմությանն ու մեսրոպաշունչ լեզվին, հորդորում, նաեւ իրենց օրինակով ոգեշնչում՝ նախանձախնդիր լինելու ազգային սրբություններին, անսասան պահելու սերը հայրենիքի հանդեպ եւ հավատարիմ մնալու մեր Եկեղեցուն, համայն հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Հայոց Հայրապետն ընդգծեց. *«Էջմիածնասիրությունն է, որ ձեր հոգում անսասան է պահել եկեղեցանվիրումը, ազգասիրությունն ու հայրենանվիրումը: Արդարեւ, մեր ժողովրդի պատմությունն իսկ վկայել է, որ հնարավոր չէ պատկերացնել հայ կյանքն առանց Ս. Էջմիածնի, որն ամուր շաղախով կապում է աշխարհասփյուռ հայությանը ի Քրիստոս հավատքի, հայրենյաց ժառանգության, մեր հայրենիքի՝ մայր Հայաստանի եւ սրբազան մեր արժեքների հետ: Ս. Էջմիածնով մենք միշտ եղել ենք զորեղ ու հաղթական՝ անվարան հավատալով առաքյալի խոսքի ճշմարտությանը. «Եթե Աստված մեզ հետ է, ո՞վ կարող է մեզ հակառակ լինել»:*

Ամենայն Հայոց Կաթողիկոսը գնահատանքով անդրադարձավ նաեւ ավստրալահայության՝ ազգային ու հայրենական կյանքի զորացման գործում ունեցած ներդրմանը՝ հաստատելով, որ արդի մտահոգիչ խնդիրների, հոգեւորի անտեսման եւ նյութականի գերարժեւորման միտումների, նաեւ մեր հոգեւոր եւ ազգային ինքնության պահպանման մարտահրավերների առջեւ հայորդիները պետք է նախանձախնդիր ոգով վերարժեւորեն հայ համայնքի անցած ուղին, հաջողություններն ու իրագործումները:

*«Պիտի հպարտանաք ձեր գովարժան ձեռքբերումներով, որը նոր խթան կլինի հոգեւոր վերաշխուժության եւ ձեր կամքի ու վճռականության վերահաստատման՝ ապրելու հավատքով, ազգային ավանդների հանդեպ սիրով ու հավատարմությամբ ու նոր կորովով շարունակելու ձեր բարի ջանքերը՝ ի սեր տիրախնամ ձեր թեմի շինության: Այդպես, սիրելինե՛ր, պիտի կարողանաք ձեր զավակների ընթացքը հաստատուն պահել Տիրոջ շավիղներում, մեր հայրերի ուղենշած ճանապարհների վրա, որոնցով ապրել, արարել եւ հարատեւել են պատմության քառուղիներում»*,– պատգամեց Հայոց Հովվապետը՝ հորդորելով միասնաբար, մեկմեկու զորակցությամբ շենացնել ազգային-եկեղեցական մեր անդաստանը, հայրենիքը, ներդրում բերել հայոց հաղթական բանակի զորացմանը, Արցախի անկախության ճանաչման գործին ու մեր արդար իրավունքների պաշտպանությանը:

Իր սերն ու Աստծո ամենաառատ շնորհների ու բարիքների մաղթանքները բերելով ավստրալահայ իր բոլոր զավակներին՝ Նորին Սրբությունը նաեւ իր օրհնությունն ու բարձր գնահատանքը փոխանցեց թեմակալ առաջնորդին, հոգեւոր դասին եւ նրանց առաքելությանն աջակից թեմական ու ծխական խորհուրդների, կրթական, ազգային, մշակութային հաստատությունների պատվարժան անդամներին ու աշխատակիցներին:

Վերջում Ամենայն Հայոց Հայրապետը մաղթեց, որ Աստված ամենազոր Իր սուրբ Աջի հովանու ներքո ամբողջ եւ անխռով պահպանի ավստրալաբնակ հայորդիներին, շնորհի նրանց բյուր բարիքներ, որպեսզի ի Քրիստոս մշտավառ սերն իրենց սրտերում՝ նորանոր հաջողություններով պայծառացնեն իրենց հոգեւոր-եկեղեցական ու ազգային կյանքը:

Սուրբ Պատարագի ավարտին Վեհափառ Հայրապետի ձեռամբ բացվեց եկեղեցու հարեւանությամբ կանգնեցված հայկական խաչքարը՝ ի նշանավորումն Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Մելբուռն հովվապետական այցելության: Այս առիթով Նորին Սրբությունն իր օրհնությունը բաշխեց խաչքարի տեղադրմանն իրենց նպաստը բերած հավատավոր հայորդիներին:

## Պաշտոնական ընդունելություն Մելբուռնում՝ ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ավստրալիա կատարած հովվապետական այցի առիթով փետրվարի 10-ին Մելբուռնում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն եւ ճաշկերույթ:

Ճաշկերույթին ներկա էին թեմի հոգեւոր սպասավորներ, Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի թեմական եւ ծխական խորհուրդների անդամներ, Մելբուռնի հայ համայնքի ներկայացուցիչներ, բարերարներ եւ հայկական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ընդունելության ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ նրա շքախմբին ողջունեցին թեմական խորհրդում Մելբուռնի ներկայացուցիչ տիար Ժակ Հոդագործյանը եւ Մելբուռնի Ս. Աստվածածին եկեղեցու հոգեւոր հովիվ Խաչեր քհն. Հարությունյանը:

Հովվապետական այցի առիթով ավստրալահայության անունից իր երախտագետ զգացումները եւ որդիական սերը Հայոց Հորը փոխանցեց Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Հայկազուն արք. Նաջարյանը՝ վերստին ընդգծելով, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցերը սփյուռքի համայնքներ մեծ խանդավառություն եւ նոր լիցքեր են հաղորդում հայրենիքից հեռու բնակվող հայորդիներին:

Պաշտոնական ճաշկերույթի ավարտին մելբուռնահայությանն իր պատգամն ու օրհնությունը բերեց Նորին Սրբություն Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը: Նորին Վեհափառությունը նշեց, որ այցի ընթացքում ունեցած հանդիպումները, միասնական աղոթքը Սիդնեյի եւ Մելբուռնի հավատավոր հայորդիների հետ, կազմակերպված միջոցառումները անհուն ուրախություն եւ քաջալերություն պարգեւեցին իրեն՝ ընդգծելով, որ կրկին զգաց իր հոգեւոր եւ ազգային արժեքների, իր ինքնության, մայր հայրենիքի եւ Սուրբ Էջմիածնի հանդեպ ավստրալաբնակ մեր ժողովրդի սերը, որը միավորում է համայն հայ ժողովրդին ի սփյուռս աշխարհի:

*«Արդարեւ, որտեղ էլ ապրում է մեր ժողովուրդը՝ հայացքն ուղղված է դեպի իր հավատքի ակունքը՝ Սուրբ Էջմիածինը, եւ իր բնօրրան հայրենիքը, որտեղ Արարատի հայացքի ներքո թեմը, որի հիսնամյակը լրացավ 2018 թվականին: Սիդնեյում նոր Առաջնորդարանի բացումը նաեւ ընծա է այդ հոբելյանին, հոգեւոր եւ ազգային կյանքը զորացնելու հրավեր ողջ ավստրալաբնակ հայ համայնքին»*,– ասաց Հայոց Հայրապետը՝ ընդգծելով, որ այցի ընթացքում գոհունակությամբ ականատեսը եղավ համայնքի գովարժան ձեռքբերումների:

Նորին Սրբությունը հաստատեց, որ քաջատեղյակ է նաեւ այսօրվա հրամայականներին եւ հայորդյաց նվիրյալ ջանքերին, որոնցով, ինչպես ողջ սփյուռքը, ջանում են հաղթահարել ազգային ինքնության, մայրենի լեզվի ու արժեքների պահպանության մարտահրավերները: *«Ժամանակը, արդարեւ, ավելին է պահանջում, առավել ջանքեր, համախմբում: Մենք կարիքն ունենք ազգային եւ եկեղեցական կյանքի մեջ մեր ժողովրդի զավակների առավել ներգրավման, ազգային միասնականության ամրապնդման եւ լավատես հոգով ներշնչուն գործունեության ծավալման:*

*Հայրապետիս հորդորն է, սիրելինե՛ր, որ ամուր հավատքով ու վառ հույսով նախանձախնդիր մնաք ձեր եկեղեցական եւ ազգային ծեւավորվել է իբրեւ ժողովուրդ եւ ապրել հազարամյակները իր պատմության: Ասում են՝ հայերի ամենասիրած նկարները Արարատի եւ Մայր տաճարի պատկերներն են: Եվ դա ճշմարտություն է ու բնական է, քանի որ այդ պատկերները նաեւ մեր ժողովրդի հոգում են՝ իբրեւ դրոշմ մեր ինքնության, հոգեւոր եւ ազգային մեր արժեքների, որոնք միավորում են մեզ մայր տաճարից մայր տաճար, համախմբում եկեղեցիների գմբեթների ներքո ու ազգային կյանքի մեջ: Որքան էլ տարբեր երկրներում մեր ժողովրդի զավակները տարբեր մտածողության, կրթության ու դաստիարակության կրողն են, նրանց մեջ բաբախում է սիրտը հայկականության, կոչնակը ազգային ինքնության: Իրոք, ի՞նչն է այստեղ բնակվող հայորդուն մղում, ամենօրյա իր հոգսերից բացի, մտածելու մայր հայրենիքի դժվարությունների մասին, հայրենիքում կամ սփյուռքի մեկ այլ համայնքում բնակվող իր ազգակցի կարիքների մասին, եթե ոչ մեր ժողովրդի լուսավոր գալիքի տեսիլքը, հոգեւոր եւ ազգային արժեքների կարեւորության գիտակցումը եւ որպես ազգի ու Եկեղեցու զավակ՝ որդիական պատասխանատվությունը:*

*Սիրելինե՛ր, քրիստոնյա եւ ազգային մեր ինքնությունը պահպանելու այդ ներքին կոչնակն է ամենուր ղողանջել հայ համայնքի ունկերին՝ առաջնորդելով հաճախ զրկանքների գնով ձեռնամուխ լինելու նախ եկեղեցու կառուցմանը եւ ապա կողքին՝ հայկական դպրոցի հաստատմանը, որպեսզի երաշխավորվի հավատքի եւ ազգային ոգու հարատեւությունը: Տասնամյակներ առաջ այս օրհնյալ երկրում հաստատված հայորդիները, ձեր հայրերն ու մայրերը, նույնպես իրենց սրտի ձայնին ունկնդիր, իրենց հոգու մղումով ստանձնեցին ազգաշեն այդ առաքելությունը, որի շնորհիվ աշխարհի այս մասում նույնպես վեր հառնեցին հայկական եկեղեցիներ եւ ազգային հաստատություններ, հռչակվեց նաեւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու կյանքի հանդեպ: Շարունակեք պայծառացնել ձեր համայնքը, ձեր զավակներին դարձրեք աշակերտներ Ավետարանի, որպեսզի լինեն Աստծո օրհնության ու շնորհների ներքո եւ կառուցեն իրենց երջանիկ կյանքը: Նրանց կրթեք եկեղեցասիրությամբ, հայրենասիրությամբ, որպեսզի մեր ժողովուրդը որդոց որդի շարունակի կրել հոգում՝ որպես նվիրական խորհուրդ, Արարատի ու Սուրբ Էջմիածնի պատկերները եւ հոգեւոր ու ազգային իր արժեքներով իրագործի իր իղձերը եւ կերտի իր ապագան»*,– ասաց Հայոց Հայրապետը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկաներին հետ խոսեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաքելության եւ ի սեր հայրենիքում եւ սփյուռքում հոգեւոր եւ ազգային կյանքի զորացման ծավալվող ամենօրյա գործունեության մասին:

Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց նաեւ հայրենիքում ընթացող փոփոխություններին եւ զարգացման հեռանկարներին՝ կարեւորելով այդ գործընթացում սփյուռքի համայնքների ներդրումը, որ հայրենիքով միավորված՝ բարձրանա ազգային մեր կյանքը ի սփյուռս աշխարհի:

Այս առիթով Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց Հայկազուն սրբազանին, նրան լծակից հոգեւոր սպասավորներին՝ ժողովրդի հոգեւոր կյանքի հանդեպ դրսեւորած նախանձախնդրության համար, նաեւ բարձր գնահատեց թեմական խորհրդի, եկեղեցական վարչությունների անդամների, ազգային կառույցներում ներգրավված հայորդիների նվիրյալ ծառայությունը՝ ի նպաստ թեմական ու համայնքային կյանքի պայծառության: Հայրապետական օրհնության արժանացավ նաեւ ճաշկերույթի կազմակերպիչ հանձնախումբը:

Վերջում Վեհափառ Հայրը աղոթք բարձրացրեց առ Աստված, որ Տերն Իր ամենախնամ Աջի հովանու ներքո խաղաղության ու բարօրության մեջ պահի Ավստրալիան եւ այստեղ բնակվող մեր ժողովրդի զավակներին, պայծառ՝ մեր եկեղեցիները, մեր ազգային հաստատությունները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայցեց, որ Երկնավորը խաղաղ պահի Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկիրը, հավատքով ամուր՝ մեր ողջ ժողովրդին ի սփյուռս աշխարհի եւ օրհնի բոլոր ջանքերը՝ ի սեր հայոց կյանքի առաջընթացի ու բարգավաճման, Եկեղեցու հավետ պայծառության:

***Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի***



**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**

**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հեռախոս՝ 517197**

**Էլ.փոստ՝** qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

**web կայք՝**
krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 15.02.2019 թ.

**Տպաքանակը՝ 1175**